ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԹԵՄԱ 4

« ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏ»

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝

«ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐ »

© Լուսինե Ալեքսանյան, Հասմիկ Անտոնյան

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԱՉԱՓ

Ուսուցիչ _____ **Ամսաթիվ** _____

Առարկան – Ես և շրջակա աշխարհը		
Դասարանը -II	Ուստարի -2020թ	Կիսամյակը - I
Թեման	**Վարքականոններ**	
Դասի նպատակը	• Օգնել գիտակցել, որ աննրբանկատ, կոպիտ վարքագիծը հաճախ կարող է ընդհարման պատճառ դառնալ, որ կշռադատված, քաղաքավարի, բարեկիրթ պահվածքը կարող է օգնել, կանխել ընդհարումը: • Նպաստել համագործակցային կարողությունների զարգացմանը, մշակել խմբով կամ զույգով աշխատելու կարողություններ:	
Վերջնարդյունքները	2Շ.Մ.Փ.Կ1ա Կիրառել քաղաքավարության կանոնները, պատրաստակամ լինել խմբով կամ զույգերով աշխատելիս:	
Ընդհանրական խաչվող հասկացությունները	**Անհատ և հարաբերություններ** • Փորձել հասկանալի դարձնել յուրաքանչյուրի դերը դրական, հարգալից, առողջ և պատասխանատու փոխհարաբերություններ ստեղծելու հարցում: Հասկանալ իրավունքների և պարտականությունների կապը, կանոնները պահպանելու և դրանով իրենց և մյուսների իրավունքները հարգելու և չխախտելու կարևորությունը: **Պատճառ և հետևանք** • Պատճառին և հետևանքին կարելի է անդրադառնալ ողջ թեմայի ընթացքում. կանոնները պահել/չպահելու հետևանքները, արարքի՝ դրական/բացասական հետևանքները, իրավունքները խախտելու/չխախտելու, պատասխանատու վերաբերմունքի հետևանքները և այլն:	
Միջառարկայական կապերը	**Մայրենի** • Մտքերը հստակ, արտահայտիչ ձևակերպի: • Հասկանա իրավունք և պարտականություն բառերը, նաև կոնֆլիկտ բառը և դրա ուղղագրությունն ու ուղղախոսությունը, բացատրելիս օգտագործի հոմանիշներ և հականիշներ՝ վեճ, կռիվ, բախում, հաշտություն, խաղաղություն, բարեկամություն և այլն, ձևակերպի հարցեր, ճիշտ ձևակերպի պատասխանները: • Կարողանա կիրառել բարեկիրթ կանոնները ամենուր՝ տանը, բակում , դպրոցում, հարևանների, բարեկամների հետ շփվելիս: • Իմանա «կախարդական» բառեր, կարողանա հաճախ կիրառել: **Արվեստ** • Դերախաղով ներկայացնի առաջադրված իրավիճակները: • Կարողանա տարբեր ապրումներ պատկերել, կոնֆլիկտ և հաշտություն ներկայացնող խորհրդանիշներ պատկերել:	

	Կարողանա տարբերել երաժշտության առաջացրած զգացումները, հույզերը: **Օտար լեզու** • Իմանա և կարողանա օգտագործել թեմային համապատասխան բառեր նաև օտար լեզվով:
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ	Դասագիրք՝ «Ես և շրջակա աշխարհը» աշխատանքային տետր, խաղ՝ LearningApps.org https://learningapps.org/display?v=p3ng12qgn21 (հղումները բացելու համար սեղմել՝ctrl +click) 1. Բարեկիրթ կանոնների ցանկ 2. Իրավիճակային քարտեր
Գնահատում	Թեստային աշխատանքի միջոց Կարելի է առաջադրել թեմայի համար ստեղծված գնահատման համապատասխան վարժությունները (1-ին կիսամյակի)
Տնային աշխատանք	Տնային աշխատանք պետք է հանձնարարել այնպիսի վարժություններ, որոնք կնպաստեն թեմայի յուրացմանը, ամրապնդմանը:

Դասի ընթացքը

Դասի փուլերը	Փուլի խնդիրները	Ուսուցչի գործողությունները	Աշակերտի գործողությունները
Կազմակերպչական մաս /1-2 րոպե/	Նախապատրաստվել դասին	Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույն, բացակաների ամրագրում:	Աշակերտները նույնպես պատրաստվում են և պատասխանում են հարցերին:
Խթանման փուլ	Պատմվածքի միջոցով կարևորել բարեկիրթ խոսքի նշանակությունն ու ազդեցությունը:	Ուսուցիչը դասը սկսում է «Հրաշալի բառը» պատմվածքի ընթերցմամբ, որից հետո ծավալում է քննարկում հարցերի միջոցով:	Լսում են պատմվածքը, պատասխանում տրված հարցերին:
Իմաստի ընկալման փուլ	Գործնական աշխատանքի միջոցով ամրապնդել բարեկիրթ կանոնների իմացությունը:	**Քայլ 1.** Խմբերին բաժանում է բարեկիրթ կանոնների ցանկը՝ կտրտած նախադասություններով, առաջարկում է գտնել և միացնել նախադասությունների կեսերը և սոսնձել թղթին: Այնուհետև հարցերով կազմակերպում է քննարկում: Շատ կարևոր է, որ այդ քննարկման արդյունքում երեխաները հասկանան, որ պետք է բարեկիրթ լինել ամենուր՝ տանը, դպրոցում, փողոցում: **Քայլ 2** Ուսուցիչը ընթերցում է «Նվերը» պատմվածքը[1] (էջ 33), հետո ծավալում է հարցերով քննարկում, առաջարկում է գտնել պատմվածքի համար այնպիսի ավարտ, որ հերոսները հաշտվեն:	**Քայլ 1.** Բաժանվում են խմբերի, կատարում են խմբային աշխատանքը՝ գտնում և միացնում են կտրտած նախադասությունները, այնուհետև սոսնձում են թղթին: Ավարտելուց հետո ներկայացնում են իրենց աշխատանքները, կատարում են դատողություններ, կատարում կարևոր եզրահանգում՝ բարեկիրթ պետք է լինել ամենուր: **Քայլ 2** Լսում են պատմվածքը, պատասխանում են հարցերին, այնուհետև, աշխատելով խմբով, փորձում են գտնել այնպիսի ավարտ, որտեղ հերոսները հաշտվում են:
Կշռադատման փուլ	Սովորածի ամրապնդում գործնական աշխատանքի միջոցով:	Ուսուցիչը զույգերին բաժանում է իրավիճակներով քարտեր, առաջարկում է նրանց գտնել ընդհարման պատճառները, մտածել այնպիսի պա-	Աշակերտները ստանում են իրավիճակներով քարտեր, կարդում են, գտնում են ընդհարման պատճառները,

[1] Լ. Ալեքսանյան, Ն.Թորոսյան «Ես և շրջակա աշխարհը» 3-րդ դասարան

		տասխաններ, որ խուսափեն վեճից, իսկ իրենց պատաս-խանները ներկայացնել դերախաղով:	կատարած աշխատանքը ներկայացնում են դերախաղով:
Անդրադարձ	Անդրադարձ դասի բոլոր փուլերով:	• Անդրադարձ է կատարում դասի բոլոր փուլերին՝ զար-գացնելով հիշողությունը, ուշադրությունը: • ուսուցիչը առաջարկում է ընթերցել ներկայացված փոքրիկ տեքստը, կշռադա-տել, բացատրել ներկայաց-ված ասացվածքը:	• Մեկ անգամ ևս անցնում են դասի բոլոր փուլերով, հիշում , ամրապնդում: • Կարդում են փոքրիկ տեքստը, վերլուծում են ասացվածքը, մեկ ան-գամ ևս անդրադառնում կատարված եզրահան-գումներին:
Գնահատում	Թեստային աշխատանք	Առաջարկում է խաղ՝ https://learningapps.org/display?v=p3ng12qgn21	